

ձեռանէ նորին, եկին ի միասին լցեալ զաչս իւրեանց արտասուօք եւ եգեալ զձեռս ի ծնօտի խորհուրդ բերեալ ի միջի եւ հնարս իմացեալ՝ կոտորեցին զհինգ պարտուց, որով կնքէին Վեհե կոչեցեալքն անօրէնք ձեռնագիրս եւ տային ի ձեռս այլազգեաց եւ առնուին դրամս ի նոցանէ՝ որպէս թէ փոխ Սրբոյ Տանն եւ մխէին իւրեանց պիտոյից. որպէս եւ այս վերոյիշեցեալ շարն՝ առնէր զնոյն կերպ չարաչար ազահու թեամբ քան զառաջինսն. վասն որոյ գրեթէ կնիքն այն լինէր պատճառ պարտուցն աճեալութեան։<sup>1</sup>

Եւ յետ կոտորելոյ կնիքն զայն, աղաչեցին զմեզ ի մի բերան, հարկագիր ստիպմամբ միաբանիցն բազմութիւնք՝ դառնալ ի Բիւզանդիա եւ պատմել զաղէտ տառապման Տանն Սրբոյ եւ հնարս իմանալ Աստուծով՝ աղատման նորին ի ձեռաց անյագ կերողացն, եւ յառաջին պայծառութիւն անդրադարձուցանել զՏունն տիեզերաց։

Եւ մեր տեսեալ զխղճութիւն Տանն տառապելոյ եւ զաղէտ գահին Աստուծոյ եւ զաղաղակ միաբանիցն՝ շարժեցեալ ի գութ Սրբոյ Տանն Աստուծոյ, որ միշտ կայր սեւեռեալ յոգի իմոյս անարժանութեան յառաջ իսկ քան զայստսիկ, որպէս գրեթէ ի մանկութենէ, ելեալ ի Սրբոյ Քաղաքէն հասաք Աստուծով ի Բիւզանդիա եւ պատմեցաք զամենայն աղէտ Սուրբ Տանն։<sup>2</sup>

Եւ լուեալ արանց բարեպաշտից, քահանայից եւ իշխանաց եւ առ հասարակ ժողովրդոց զտառապելութիւն եւ զկրօսկիծ Սրբոյ Տանն, որպէս եւ իցէ հնարիւ խորհուրդ առեալ ի միջի՝ արարին զԱռաջնորդութիւն Բիւզանդիոյս ի վերայ մերս խղճութեան՝ վասն օգտի եւ շահու Տանն Սրբոյ։  
Եւ լիեղէր զէր սիրտ մեզ այս գործ, բայց առա-

1 Հաննէ էջ 118։

2 Հաննէ էջ 118-119։